Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր
(Խորհրդատվական ծառայություններ-կազմակերպության ընտրություն)

31 հոկտեմբերի 2024թ.

Երկիր՝ **Հայաստանի Հանրապետություն**
Ծրագրի անվանումը՝ «Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի և էներգիաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում և պիլոտային ջերմամեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում միջոցառում»

GIZ դրամաշնորհ No. 81297609

Պայմանագրի անվանումը՝ Հանրային իրազեկման միջոցառումներ Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերում կայուն էներգետիկ տեխնոլոգիաների կիրառումը խթանելու նպատակով;

Փաթեթի համարը՝ ***GIZ/ESF/CS/CQS - 2024/003***

Ում՝ Հետաքրքրված Կազմակերպությունների ներկայացուցիչներին

1. Էներգախնայողության աջակցման հիմնադրամը GIZ-ից ստացել է դրամաշնորհ «ԵՄ-ն հայկական համայնքներում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի համար ծրագիր-Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի և էներգիաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում և պիլոտային մեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում միջոցառում» ծրագրի ծախսերը հոգալու նպատակով, և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել ***No. GIZ/ESF/CS/CQS - 2024/003*** պայմանագրի շրջանակներում Հանրային իրազեկման միջոցառումներ Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերից ցանկացած երկուսում կայուն էներգետիկ տեխնոլոգիաների (էներգաարդյունավետության, էներգախնայողության վերականգնվող էներգիայի լուծումների) կիրառումը խթանելու նպատակով իրազեկման ծառայությունների ձեռքբերման համար:

2. Էներգախնայողության աջակցման հիմնադրամը այժմ հրավիրում է իրավասու հայտատուներին մրցութային հայտեր ներկայացնել Հանրային իրազեկման միջոցառումներ Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերից ցանկացած երկուսում կայուն էներգետիկ տեխնոլոգիաների կիրառումը խթանելու նպատակով Հանրային իրազեկման միջոցառումների իրականացման համար:

EU4Energy Efficiency and Renewable Energy in Armenian Communities

3. Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ հետևյալ հասցեով. Էներգախնայողության Հիմնադրամ, ՀՀ, ք. Երևան, 26/1 Վազգեն Սարգսյան պող., Էրեբունի բիզնես կենտրոն 4-րդ հարկ, 414 սենյակ, Արթուր Գրիգորյան, էլ. փոստ՝ info@esfarmenia.org և artgrigoryan@yahoo.com: Մրցույթային փաստաթղթերի մասին հարցերը կարող են պարզաբանվել ստորև նշված հասցեով, ժամերի ընթացքում՝ 09.00-ից մինչև 18.00:

4. Սույնով Էներգախնայողության Աջակցման Հիմնադրամը («Պատվիրատու») հրավիրում է իրավասու կազմակերպություններին («Խորհրդատուներ») ներկայացնել հետաքրքրության հայտեր վերոնշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ: Նշված ծառայությունները տրամադրելու նպատակով շահագրգիռ Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկատվություն պահանջվող որակավորման և համապատասխան փորձի վերաբերյալ (կազմակերպության մասին տեղեկատվություն, նմանատիպ ծառայությունների տրամադրման փորձ/նկարագրություն, պետական գրանցման վկայական, կազմակերպության կոնտակտային տվյալները և այլն):

5. **Կից՝ Տեխնիկական առաջադրանքը և Խորհրդատուի փորձի ներկայացման աղյուսակը:**

6. Որակավորման չափանիշներն են՝
   - Ստեղծարարություն. որքանո՞վ են գրավիչ և նորարարական առաջարկվող գործողությունները – 20 միավոր:
   - Ազդեցություն՝ իրազեկության բարձրացման և կայուն էներգետիկ տեխնոլոգիաների ընդունման կամ օգտագործման վրա ազդելու ներուժ – 20 միավոր:
   - Իրագործելիություն՝ ինչքանով է իրատեսական և իրագործելի առաջարկ – 20 միավոր:
   - Չափելիություն՝ ինչքանով է իրատեսական ազդեցության գնահատման մեթոդաբանությունը և արդյունքների չափման հնարավորությունը – 20 միավոր:
   - Փորձ՝ նմանատիպ միջոցառումների կազմակերպման փորձ, հատկապես էներգետիկայի կամ բնապահպանական ոլորտներում – 20 միավոր:

7. Գնումն իրականացվելու է Համաշխարհային Բանկի գնումների ընթացակարգով, «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» (CQS) մեթոդի կիրառմամբ:

8. Հայտատու ընկերությունները կարող են համագործակցել միմյանց հետ՝ իրենց որակավորումը բարձրացնելու նպատակով: Այս դեպքում անհրաժեշտ է հստակ նշել համագործակցության ձևը՝ **Համատեղ ձեռնարկատիրական գործունեություն (ՀՁԳ) և/կամ ենթախորհրդատու:** Պայմանագրի իրականացման ողջ ընթացքում ՀՁԳ բոլոր անդամները համապարտ պատասխանատվություն են կրում, եթե վերջիններս ընտրվեն:

9. Հետաքրքրության հայտը պետք է ներկայացվի **հայերեն**, **<u>էլեկտրոնային տարբերակով</u>**՝ ստորև նշված հասցեով, ոչ ուշ քան **2024թ-ի նոյեմբերի 08-ը, ժամը 15:00:** Հետաքրքրության հայտում պետք է հստակ նշված լինի **Հանրային իրազեկման միջոցառումներ Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերից ցանկացած երկուսում կայուն էներգետիկ տեխնոլոգիաների կիրառումը խթանելու նպատակով; GIZ/ESF/CS/CQS - 2024/003**

Վերոնշյալ հասցեն է՝

Պատվիրատու՝ *Էներգախնայողության Աջակցության Հիմնադրամ*

Լիազորված ներկայացուցիչ՝ *տկն. Աստղինե Պասոյան, Գործադիր տնօրեն*

Հասցե՝ *ՀՀ, ք. Երևան, 26/1 Վազգեն Սարգսյան պող., Էրեբունի բիզնես կենտրոն 4-րդ հարկ, 414 սենյակ*

Հեռ.՝ *+374-93 61 16 19;*
Էլ. փոստ՝ info@esfarmenia.org

Հարգանքով՝

Աստղինե Պասոյան
Գործադիր տնօրեն
Էներգախնայողության աջակցման հիմնադրամ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հանրային իրազեկման միջոցառումներ Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերում կայուն էներգետիկ տեխնոլոգիաների կիրառումը խթանելու նպատակով

«Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» ՀԿ-ն հրավիրում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) ներկայացնել առաջարկներ երեք թիրախային մարզերից ցանկացած երկուսում երկու իրազեկման միջոցառում կազմակերպելու համար: Այս միջոցառումները կնպաստեն կայուն էներգիայի տեխնոլոգիաներին և նպատակ կունենան բարձրացնել տեղական բնակչության իրազեկությունը էներգաարդյունավետության և վերակայնգնվող էներգիայի առավելությունների և հասանելիության վերաբերյալ, որոնք առաջարկում են լուծումներ, ինչպիսիք են արևային վահանակների տեղադրումը, ջերմամեկուսացումը, էներգաարդյունավետ վառարանները, այլընտրանքային կենսազանգվածը և էներգաարդյունավետ (ԷԱ) լուսավորությունը:

<u>Ներածություն</u>

Եվրոպական միության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (ԳԴՀ ՏՀԶՆ) ֆինանսական աջակցությամբ և որպես «ԷԿՈսերվ» ծրագրի մաս Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն Հայաստանի համայնքներում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի» ծրագրի շրջանակներում «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» ՀԿ-ն իրականացնում է «Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի և էներգիաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում և պիլոտային մեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում» միջոցառումը: «ԵՄ-ն հանուն Հայաստանի համայնքներում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի» ծրագրի նպատակն է ապահովել համայնքներին և տնային տնտեսություններին էներգաարդյունավետության և կայուն էներգիայի հնարավորությունների ավելի լավ հասանելիությամբ՝ նպաստելով գյուղական բնակչության էներգետիկ անվտանգության բարելավմանը և բնական պաշարների պահպանությանը: Ծրագիրը մեկնարկել է 2023թ. դեկտեմբերին:

Ծրագրով նախատեսվում է մինչև ս.թ. Դեկտեմբերի 20-ը իրականացնել հանրային իրազեկման մի շարք միջոցառումներ Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերից ցանկացած երկուսում՝ տեղական բնակչության շրջանում կայուն էներգետիկ տեխնոլոգիաների կիրառումը խթանելու նպատակով: Տեխնոլոգիաները ներառում են՝ արևային վահանակների տեխնոլոգիան, ջերմամեկուսացումը, էներգաարդյունավետ պատուհանները, դռները և լուսավորությունը, այլընտրանքային կենսազանգվածի կիրառումը, էներգաարդյունավետ վառարաններ և այլն:

Նախատեսվում է, որ միջոցառումները կներառեն կայուն էներգետիկայի և էներգաարդյունավետության թեմայով ցուցահանդեսի կազմակերպում,

մանկապատանեկան ուսումնական այցեր, հանրամատչելի, զվարճալի միջոցառումներ լայն հանրության համար (մրցույթներ, ֆլեշմոբ, խաղեր, և այլն)։

Էներգախնայողության աջակցման հիմնադրամը սույնով հրավիրում է ներկայացնել առաջարկներ՝ վերոհիշյալ ծրագրի շրջանակներում վարը բերված առաջադրանքի կատարման համար։

Առաջադրանքի նպատակը

Առաջադրանքի նպատակն է օժանդակել Հիմնադրամին՝ իրականացնելու կայուն էներգետիկայի թեմայով իրազեկման միջոցառումների ծրագիրը։

Իրազեկման միջոցառումների հիմնական նպատակներն են՝

- Բարձրացնել իրազեկությունը. տեղի բնակչությանը տեղեկացնել կայուն էներգետիկ տեխնոլոգիաների և դրանց առավելությունների մասին՝ ներգրավելով կայուն էներգետիկ լուծումներ առաջարկող տեղական ընկերություններին
- Ներգրավվել հիմնական թիրախային խմբերին, այն է երիտասարդներին և դպրոցականներին, տնային տնտեսություններին, տեղական որոշումներ կայացնողներին, ավելի լայն հասարակությանը
- Դյուրինացնել տեխնոլոգիաների կիրառությունը. ապահովել կայուն էներգիայի տեխնոլոգիաների մատակարարներին հնարավորություն ներկայացնելու, ներդնելու կայուն էներգետիկ տեխնոլոգիաները համայնքում

Յուրաքանչյուր մարզում իրազեկման միջոցառումներ իրականացնելու համար ընտրվելու է համապատասխան մարզում գրանցված մեկ ՔՀԿ։

Ընտրված ՔՀԿ-ները պատասխանատվություն են կրելու վերը նշված երեք մարզերից երկու տարբեր մարզերում կազմակերպել իրազեկման միջոցառումներ (յուրաքանչյուրն իր մարզում), որը կներառի՝

- Երիտասարդների ներգրավմամբ ստեղծագործական և հետաքրքրաշարժ կրթական միջոցառում՝ առնվազն 50 մասնակցի ներգրավմամբ
- Կայուն էներգետիկ տեխնոլոգիաների և դրանց օգուտների վերաբերյալ համայնքին և հետաքրքրված կազմակերպություններին իրազեկելու ցուցահանդես-միջոցառում
- Թվային իրազեկման արշավ

Առաջարկի բովանդակությունը

Հետաքրքրված կազմակերպությունները կարող են ներկայացնել տեխնիկական առաջարկներ, որոնք առնվազն պետք է պարունակեն հետևյալը.

Ա) տեղեկություններ կազմակերպության վերաբերյալ,
Բ) տեղեկություններ կազմակերպության փորձառության վերաբերյալ

Գ) առաջարկվող միջոցառումների նկարագրություն՝ մեթոդաբանությունը, ժամանակացույցը և վայր

Մասնավորապես, Խորհրդատուն պետք է առաջարկի.

- համայնքում կայուն էներգետիկայի և էներգաարդյունավետության տեխնոլոգիաների շուկայի հիմնական մատակարարների մասնակցությամբ ցուցահանդեսի կազմակերպում և հասարակության մասնակցության ապահովում
- համայնքում դպրոցական տարիքի երեխաներին ուղղված և նրանց մասնակցությամբ իրազեկման միջոցառման կազմակերպում՝ ինտերակտիվ, ներառական, զվարճալի մոտեցումների կիրառմամբ: Այդպիսիք կարող են ներառել ուսումնական այցեր ցուցադրական վայրեր, հանրամատչելի, կրթական խաղեր, զվարճալի միջոցառումներ, մրցույթներ
- Կազմակերպությունը պետք է ապահովի միջոցառումների ժամանակ և դրանց հետ կապված տրանսպորտ, հյուրասիրություն, լուսա- և տեսա-նկարահանում, ԶԼՄ-ների կողմից լայնածավալ լուսաբանման և սոցիալական ցանցերում շրջանառման ապահովում:

Առաջարկում նշել՝

1. գնահատված պոտենցիալ մասնակիցների քանակները,
2. միջոցառումների տևողությունը
3. պահանջվող նյութերը, պայմանները
4. կատարված աշխատանքների ազդեցության գնահատման մեթոդաբանությունը:

Պատվիրատուն հնարավորինս կաջակցի ծրագրի կազմմանը, տեխնիկական բովանդակության լավացմանը, ոլորտի մատակարար կազմակերպությունների հետ կապերի հաստատմանը:

<u>Որակավորման չափանիշներն են՝</u>

- Ստեղծարարություն. որքանո՞վ են գրավիչ և նորարարական առաջարկվող գործողությունները – 20 միավոր:
- Ազդեցություն՝ իրազեկության բարձրացման և կայուն էներգետիկ տեխնոլոգիաների ընդունման կամ օգտագործման վրա ազդելու ներուժ – 20 միավոր:
- Իրագործելիություն՝ ինչքանով է իրատեսական և իրագործելի առաջարկ – 20 միավոր:
- Չափելիություն՝ ինչքանով է իրատեսական ազդեցության գնահատման մեթոդաբանությունը և արդյունքների չափման հնարավորությունը – 20 միավոր:
- Փորձ՝ նմանատիպ միջոցառումների կազմակերպման փորձ, հատկապես էներգետիկայի կամ բնապահպանական ոլորտներում – 20 միավոր:

Հայտատուի փորձը

Ժամկետ-ները	Առաջադրանքի անվանումը /և հիմնական արդյունքների/ արտադրանքի համառոտ նկարագիրը	Պատվիրատուի և առաջադրանքի կատարման երկրի անվանումը	Պայմանագրի մոտավոր ընդհանուր արժեքը / Ձեր ընկերությանը վճարված գումարը	Առաջադրանքի շրջանակներում գործառույթները
{օրինակ՝ 2019 թ. հունվար — 2020 թ. ապրիլ}	*{օրինակ՝«..... որակի բարձրացում»՝մշակվել է .....-ի ռացիոնալացման ամփոփ պլան}*	*{օրինակ՝..... նախարարություն, երկիր}*	*{օրինակ՝1,5 մլն ՀՀԴ/1,0 մլն ՀՀԴ}*	*{օրինակ՝ Կոնսորցիումի/ՀՀ Գ-ի կազմում առաջատար մասնակից A&B&C}*
{օրինակ՝ 2022 թ. հունվար-մայիս}	*{օրինակ՝«..... տարածքային վարչակազմին աջակցում»՝ ..... վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում}*	*{օրինակ՝..... քաղաքի վարչակազմ, երկիր}*	*{օրինակ՝2,2 մլն ՀՀԴ/2,2 մլն ՀՀԴ}*	*{օրինակ՝ միանձնյա խորհրդատու}*